ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶ

ՀՐԱՄԱՆ № 66-Լ

«08» 08 2023 թ. քաղաք Երևան

ՀԱՆՁՆՈՒՄ-ԸՆԴՈՒՆՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Ռաֆայել Ռազմիկի Մանուկյանին Երևան քաղաքի դատախազի տեղակալի պաշտոնին փոխադրելու և Վարդան Գուրգենի Պողոսյանին Արարատի մարզի դատախազի պաշտոնին նշանակելու մասին Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի համապատասխանաբար՝ 2023 թվականի օգոստոսի 4-ի թիվ 363-Ա և 361-Ա հրամանները, այն, որ անհրաժեշտ է կատարել Արարատի մարզի դատախազության վարույթների, փաստաթղթերի և գույքի հանձնում-ընդունում, ղեկավարվելով «Դատախազության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետով և 30-րդ հոդվածի 3-րդ մասով՝

Հրամայում եմ՝

1. Կատարել Ռաֆայել Ռազմիկի Մանուկյանի կողմից՝ Արարատի մարզի դատախազության վարույթների, փաստաթղթերի և գույքի հանձնում, իսկ Վարդան Գուրգենի Պողոսյանի կողմից՝ ընդունում, որի համար ստեղծել հանձնախումբ՝ հետևյալ կազմով.

Հանձնախմբի ղեկավար՝

Ավագյան Եղիազար - ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ,

Հանձնախմբի անդամներ՝

Նիկողոսյան Հայկազ - Արարատի մարզի դատախազի տեղակալ,

Մարտիրոսյան Հայկ -	ՀՀ դատախազության ֆինանսատնտեսական վարչության պետ,
Նազարեթյան Արմինե -	ՀՀ դատախազության արխիվի բաժնի պետ,
Ղահրամանյան Մարուշ -	ՀՀ դատախազության ընդհանուր բաժնի պետի պաշտոնակատար,
Մանուկյան Լիաննա -	ՀՀ դատախազության առաջին բաժնի պետ,
Ոսկանյան Օդեթ -	Արարատի մարզի դատախազության տարածքային բաժնի պետ:

2. Հանձնախմբի ղեկավարին՝ հանձնման-ընդունման ակտի մեկ օրինակը մինչև 2023 թվականի օգոստոսի 18-ը ներկայացնել Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության կազմակերպական-վերահսկողական և իրավական ապահովման վարչություն:

Ա.ՎԱՐԴԱՊԵՏՅԱՆ